ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/12 «08» 01 2024 թ.

ՖԱԷՌՄԵՆ ՍՊԸ (ՀՎՀՀ 00477761)
ՀՀ, ք. Երևան, Ավան Աճառյան 33/6
Հեռ.՝ +37433 07 01 01

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ՀՀ ՆԳՆ ոստիկանության և «ՖԱԷՌՄԵՆ» ՍՊԸ-ի միջև 06.07.2023թ. կնքվել է թիվ ՀՀ ՆԳՆ ՈՍ ԷԱՃԱՊՁԲ/2023ԿՇԲ-2 ծածկագրով 215 հատ կրակմարիչների մատակարարման գնման պայմանագիր՝ 650000 դրամ գումարի, որի շրջանակներում «ՖԱԷՌՄԵՆ» ՍՊԸ-ն պարտավոր էր պայմանագրի 2.4 կետով ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և(կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում՝ համաձայն 14.09.2023 թվականին կնքված թիվ 1 համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օր հետո, 15 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2023թ. դեկտեմբերի 25-ը:

Սույն թվականի նոյեմբերի 7-ին «ՖԱԷՌՄԵՆ» ՍՊԸ-ին ներկայացվել է նախազգուշացում՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու, սակայն մինչև 05.01.2024թ. չի մատակարարել, ուստի պայմանագիրը միակողմանի լուծվում է՝ կիրառելով տուժանքի և տուգանքի մասին պայմանագրի դրույթները՝ համաձայն պայմանագրի 6-րդ կետի պահանջների՝ յուրաքանչյուր ուշացված

աշխատանքային օրվա համար գանձել տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով՝ 46 աշխատանքային օրերի նկատմամբ, որը կազմում է 14950 դրամ /650000×0.05%×46օր=14950դրամ/ և տուգանք պայմանագրի արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ /650000×0.5%=3250 դրամ/:

Կատարողին առաջարկվում է սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 /հինգ/ օրացուցային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 5.2 կետերով նախատեսված տուգանք՝ 3250 /երեք հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, պայմանագրի 5.3 կետերով նախատեսված տույժ՝ 14950 /տասնչորս հազար ինը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900008000758 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված պայմանագրի ապահովում՝ 215000 /երկու հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ և որակավորման ապահովում՝ 322500 /երեք հարյուր քսաներոկու հազար/ ՀՀ դրամ, հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան, Նալբանդյան 130/:

Կատարողի կողմից նշված գանձման ենթակա գումարները չվճարվելու դեպքում ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Վ.Մաշկովսկայա
Հեռ.՝ 010-59-66-76